Պարույր Սևակ

Ուշացած իմ սեր

I

Դու տեսնո՞ւմ ես հիմա, իմ սիրելի՛,
Թե մեզ ո՛ւր հասցրրեց քո ուշացած սերը,
Քո ուշացա՛ծ սերը,
Դու չուշացա՛ծ իմ սեր:
Կշտամբանքի խոսքեր ես չեմ ուզում ասել:
Բայց դու ո՞նց թույլ տվիր,
Որ նա՛ դառնա տերրդ,
Ում դու չէիր սիրում
Եվ ում համար
Չէին դողում շրթերդ՝ ինչպես հիմա,
Չէին շողում աչքերդ՝ ինչպես հիմա,
Ինչպես հիմա՝ կուրծքդդ չէր տրրոփում կրքով:
Ինչպե՞ս դու քանդեցիր տունդդ քո իսկ ձեռքով:
Զուր մի՛ արդարանա:
Սիրո հարցում
Չի՛ ճանաչում կյանքը արդարացում:
Զուր մի՛ ասա, թե դու
Բոլորովին անփորձ աղջիկ էիր այնժամ,-
Սե՛րը, ո՛չ, չի զգում փորձի կարիք:

Մի՛ մտածիր իզուր,
Թե կյանքն ինքը քեզ հետ իբրր վարվեց դաժան,-
Կյանքը չի՛ բաժանում չարիք-բարիք:
Եվ մի՛ կարծիր իզուր,
Թե չբերեց բախտրդ:
Բախտ բերելրս ո՞րն է,
Նրան ձե՛ռք են բերում:

II

Եվ այսպես է լինում.
Ներբության տեղ՝ սիրով
Ոմանք նուրբ մետաքսն են գերադասում հաճախ:
Եվ այսպես է լինում.
Տաքության տեղ սիրո
Ոմանք տաք մուշտակն են գերադասում հաճախ:
Ո՞ր հիմարը կասի, թե վատ բան է
Բարձրր աստիճանը,
Փողով լի գրպանը,
Եթե... սիրո հարցում շիրիմ չէ գրպանը:
Երախտապա՞րտ եմ ես դատարկ իմ գրպանին,
Թե չէ, ի՛նչ իմանաս, աստվա՞ծ չանի,
Չէ՞ որ կարող էր նա ինձ էլ գուցե
Ուրիշների հիմար դրության մեջ գցել.
Կարող էի, այո՛, կարող էին ինձ է՛լ
«Աղվես» -ի տեղ իրենց ուսին գցել.
Իբրև մուշտակ՝ կրել,
Իբրև ոսկե քորոց՝ կրծքին խրել::
Չեն կարո՞ղ,
Ի՞նչ է,

Նրանք՝ հետիոտները,
Իսկ ես ձիավո՞ր եմ.
Նրանք՝ կլոր գրո,
Իսկ ես միավո՞ր եմ:
Ախ,չէ՞, կարո՛ղ էին,
Որովհետև կյանքում
Մեծագույնը մեծին միշտ հաղթում է:
Իսկ շատերի համար, անշուշտ, սրտից մեծ է
Կահավորված-կարգին-շքեղ տունը:
Ախ, չէ՛. կարո՛ղ էին,
Որովհետև կյանքում
Թեպետ հաղթությունը միշտ նորինն է,
Սակայն հինն էլ կյանքում
Նրանով է կանգուն,
Նրանով է զորեղ,
Որ նա հին է:
Իսկ «քաղքենի» կոչումն այնքան է հին կյանքում,
Որքան... ինքը կինը:
Բայց արտաքուստ քեզ պես
Ու քեզ նման կարծես
Նույն այդ կինը
Անհունորեն քեզնից և տարբեր է այնպես,
Ինչպես նկարներից՝ «նեգատիվը»:
Եվ ինձ համար բախտ է,
Մեծ պատիվ է,
Որ դու ուրի՛շ կին ես,
Իմ անգի՛նըս,
Որ հեռու ես ամեն մի քաղքենուց,
Ինչպես պղտոր ջուրը՝ կարմիր գինուց...

III

Բայց, սիրելի՛ս, քեզ հետ եղել է վատթարը,
Քեզ հետ պատահել է ահավորը:
Քաղքենուհին անգամ պակաս մեղավոր է,
Քան դու՝
Իմ անմե՛ղըս,
Իմ արդա՛րըս:
Նա՝ վատ թե լավ՝ կյանքում առևտուր է անում.
Մի բան՝ տալիս,
Տեղը ուրիշ բան է առնում:
Նրան կարելի է արհամարհել,
Իսկ քեզ... կարելի է քեզ չներե՛լ,
Որովհետև նրանք սեր են խաղում,
Իսկ դու... խաղացել ես դու սիրո՛ հետ.
Որովհետև նրանք կյանք են խաղում,
Իսկ դու... խաղացել ես դու կյանքի՛ հետ:
Քեզ ո՞նց ներել, թե դու
Գնացել ես մարդու
Այնպես, ինչպես մի օր քո հեռավոր տատը,
Երբ որ հարցը ոչ թե սերն ու սիրտն են լուծել,
Այլ, ամենից առաջ, մատնեմատը:
Ինչպե՞ս ներել, թե դու
Գնացել ես մարդու,
Ինչպես Արևելքում ընդունված է եղել
Երկո՛ւ հազար տարի՝
Ձավակի հետ մի լավ գերդաստանի,
Որի յոթը պորտին ճանաչել է հայրը,
Որի յոթը պորտին ճանաչել է մայրը,
Ճանաչել են,

Սակայն նրա գերդաստանի՞ն,
Բայց ո՛չ նրան, ում դու
Գնացել ես մարդու:
Գնացել ես մարդու
Եվ... մտածե՛լ,
Թե սերն ինքը,
Եթե կյանքում նա կա,
Հետո մի օր կգա,
Թո՛ղ որ առաջնեկի՝
Քեզ պես ու քեզ նման մի աղջկա,
Թո՛ղ որ երկրորդ մանկան՝
Իր հոր քթից թռած մի շեկլիկի
Ծնընդի հետ,- մե՞կ է՝
Միայն թե գա...
Սակայն սերը փառք չէ,
Ոչ էլ հաջողություն,
Որ հետո գա
Եվ կամ
Բնավ չգա:
Հյո՛ւր չէ,
Որ մերթ ընդ մերթ այցելի ձեր տունը,
Մերթ պատճառի հաճույք
Ու մերթ՝ տհաճություն,
Խանգարելով անուշ ձեր ետճաշյա քունը:
Ախ, չէ՞,
Սերը հյո՛ւր չէ,
Տանը հյո՛ւր չէ սերը:
Թե բանն այդտեղ հասավ՝
Նա տանտե՞ր է:
Հիմա դու լավ գիտես,

Իմ սիրելի՛,
Որ սիրո հետ խաղալ չի՞ կարելի.
Ո՛չ նա խաղալիք է,
Ո՛չ էլ մանուկ ես դու:
Իսկ թե խաղալիք է՝
Նա չի ջարդվում ինքը.
Հետը խաղացողին արդեն ինքն է այնպե՛ս ջարդում,
Ինչպես որ նա քեզ է ջարդել հիմա...
Մի՞թե արդեն պարզ չէ և քե՛զ համար,
Որ կարող է սերը... վրեժխնդի՞ր լինել,
Վրեժ լուծել՝
Իրեն անտեսելո՞ւ համար.
Տառապալից սիրով չսիրողին զինել,
Ինչպես որ քեզ՝ հիմա...

IV

Ես սառույցի նման կհալչեի
Քաղքենական տաքուկ ու գաղջ օդում,
Եվ ինձ... ինձ չէր փրկի
Եվ ո՛չ մի սառնարան՝
Վերջին «մարկան» վրան:
Ես թշնամո՛ւս անգամ չեմ կամենում
Տնաբույս ճյուղ լինել արմավենու՝
Լուսամուտի գոգին,
Կրճուճի մեջ կավե,
Եվ կամ լինել ոսկե-չգործածվող գավե՛ր...
Չէ՛, ես սառույցի պես կհալչեի
Քաղքենական տաքուկ ու գաղջ օդում:
Բայց... ես ո՞նց եմ ուզում

Ու երազում,
Անգի՛ն,
Քո ոտքերը տեսնել իմ գրկաբաց շեմքին,
Քեզ մեկընդմիշտ տեսնել իմ տանն աղքատ ու հին
Եվ հավատալ, որ դո՛ւ,
Դո՛ւ ես տանտիրուհին:
Բա՛ռնը,
Բա՛ռնը է հնչում.
«Իմ սիրելի՛»,
«Իմ սե՛ր»:
Բայց ես ո՛նց եմ ուզում
Ու երազում,
Անգի՛ն,
Քեզ շշուկով, ան-ծա՛յր մի շշուկով ասել,
Քեզ շշնջալ.
«Իմ կի՛ն»...

V

Իսկ դու ուրիշինն ես,
Իսկ դու ուրիշինն ես,
Դո՛ւ - ուրիշի՛ն:
Դո՛ւ, իմ հարազա՛տը,
Մոտի՛կ - հարազատը,
Եվ - ուրիշի՛ն...
Ա՛խ, ուրիշին թող որ մեկ ուրիշը լիներ,
Չէ՞ր կարելի, ասա՛:
Ա՛խ, դու այդ ինչպե՞ս ես ուրիշինը եղել,
Իմ սիրելի՛, ասա՛...
Եվ նա ով է՝ գիտե՛մ:

Պարզ է. նա ո՛չ կարիճ,
Եվ ո՛չ էլ իժ է նա:
Գուցե վատ չէ այնքան,
Գուցե լավն է անգամ,
Բայց քեզ համար օտա՛ր - ուրի՛շ է նա...